



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ԼՃԱՇԵՆ
ԶԿԱԼՈՎԿԱ
ՆՈՐԱՇԵՆ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՄԵՊՏԵՄԲԵՐ – ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013

Այս հետազոտությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Վերլուծության իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2013 թ-ի սեպտեմբեր ամսին ԱՄՆ ՄԶԳ ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ Գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի հավաքագրում:*
- ⇒ Համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:*
- ⇒ Առկա արժեքի շղթաների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:*
- ⇒ Աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար:*
- ⇒ Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ձևակերպում:*
- ⇒ Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:*
- ⇒ Ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:*

Բովանդակություն

Համագործակից կառույցներ.....	2
1. Համայնքներ	4
1.1. Լճաշեն.....	4
1.2. Չկալովկա	5
1.3. Նորաշեն.....	5
2. Տնտեսության ճյուղերի վերլուծություն	6
3. Համայնքների մրցակցային առավելությունները	7
3.1 Մրցակցային առավելություններ, որոնք ընդհանուր են երեք համայնքների համար.....	7
3.2 Մրցակցային յուրահատուկ առավելություններն առանձին համայնքների համար.....	7
4. Անասնապահության վերլուծություն	8
4.1 Ընդհանուր տվյալներ.....	8
4.2. Շուկայի վերլուծություն.....	9
4.3. Խոշոր եղջերավոր անասնապահության արժեչղթայի սխեմատիկ պատկեր	11
4.4. Մատակարարների հետ հարաբերություններ	12
Անասնաբուժական ծառայություններ.....	12
Խտացված կերերի վաճառք.....	13
Մարքավորումներ	13
Մարդկային ռեսուրսներ	13
Անասնակերի հավաքում.....	14
4.6. Անասնապահության ոլորտում ծախսային հաշվարկ (10 կով):	15
5. Ոչխարաբուծություն.....	17
6. Անասնապահության արդյունավետության բարձրացման հնարավորություններ.....	18
6.1 Լիակթում.....	18
6.2. Հեռագնա արտոնների և արտավայրերի արդյունավետ օգտագործում	19
6.3 Կաթնատու տոհմային անասունների բուծում	19
6.4 Կաթի մթերում և կաթնամթերքի արտադրություն.....	20
7. Նախաձեռնություններ անասնապահության արժեչղթայում.....	21
8. Հողագործության վերլուծություն	22
9. Նախաձեռնություններ հողագործության ոլորտում.....	23
10. Զբոսաշրջության վերլուծություն	24
11. Զբոսաշրջիկության արժեչղթայի գնահատում	25

1. Համայնքներ

Փոքր Սևանի հարավ-արևմտյան ափին՝ հարևանությամբ են գտնվում Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքները:

Այս համայնքները, ունենալով վարչական հստակ տարանջատում, այնուամենայնիվ, տարիների ընթացքում թե՛ տնտեսական և թե՛ ազգակցային առումներով սերտաճել են: Ունեն փոխկապակցված տնտեսություններ, ազգակցային և գործնական սերտ կապեր:

Մարդիկ հյուրասեր են, գործունյա: Զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և դաշտավարությամբ: Մասամբ զարգացած է նաև զբոսաշրջությունը:

1.1. Լճաշեն

Լճաշեն համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, փոքր Սևանի հարավ - արևմտյան ափին՝ Սևան քաղաքից 1կմ հեռավորության վրա: Մայրաքաղաքից հեռավորությունը կազմում է 56 կմ, մոտակա երկաթգծից՝ 4 կմ, մարզկենտրոնից՝ 32 կմ:

Գյուղի արևելյան կողմում՝ նախաուրարտական բնակատեղի մոտ, մեծ ու անտաշ քարաժայռի վրա փորագրված է գյուղի մասին առաջին գրավոր հիշատակումը՝ Արգիշտի Առաջինի մ.թ.ա. 776թ-ին այստեղ թողած սեպագիր արձանագրությունը: Գյուղում և նրա շրջակայքում կան ինչպես Արամեան շրջանի, Արարատյան թագավորության, այնպես էլ Արտաշեսյան, քրիստոնեական ժամանակաշրջանների հուշարձաններ, պաշտամունքային կոթողներ:

Գյուղը վերակենդանացել է 1828թ-ին, երբ հիմնավորվել են Մակվից, Դիադենից, Բայազետից գաղթած 58 հայ ընտանիքներ: Գյուղը կոչվել է Պորտակ, Օրդակլու, Էրդակլու, Օրդաքլու: 1946թ ապրիլին գյուղն անվանվել է Լճաշեն:

1.2. Չկալովկա

Չկալովկա համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, փոքր Սևանի հարավ - արևմտյան ափին՝ Սևան քաղաքից 5կմ. հեռավորության վրա: Մայրաքաղաքից հեռավորությունը կազմում է 60 կմ, մոտակա երկաթգծից՝ 9կմ, մարզկենտրոնից՝ 25կմ:

Գյուղը հին բնակավայր է, նախկին անվանումներն են եղել՝ Ալեքսանդրովկա, Աղեքսանդրովկա, Ջեյնալ (Աբեդին):

1946թ-ին ականավոր օդաչու Վ.Չկալովի հիշատակին համայնքն անվանվել է Չկալովկա:

Գյուղը վերաբնակեցվել է 1840թ. Պովոլժիեի, Սարատովի, Տամբովի նահանգներից եկած ռուսներով: Մինչև 1926թ. գյուղը ռուսաբնակ էր: Հետագա տարիներին ավելացել են նաև հայ ընտանիքներ: Ներկայումս գյուղն ունի 600 բնակիչ, մեծամասնությունն են կազմում հայ ընտանիքները:

1.3. Նորաշեն

Նորաշեն գյուղը հիմնադրվել է 1920թ.-ին, գտնվում է Սևանա լճի հյուսիս -արևմտյան ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից 23 կմ է, մայրաքաղաքից՝ 63 կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1940 մ բարձրության վրա:

Նորաշենը նախկինում անվանվել է Էֆենդի, Ռախմատքենդ , հետագայում՝ 1938թ-ին, Հայաստանի կառավարության առաջարկով կոչել են նախ՝ Քարաշեն, ապա՝ Նորաշեն:

Աղյուսակ 1.1. Համայնքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

	Լճաշեն	Չկալովկա	Նորաշեն
Բնակչություն	5026	601	519
Տնային տնտեսություններ	1270	148	123
Վարելահող	1582 հա	425 հա	196 հա
Խոտհարք	549 հա	411 հա	358 հա
Արոտավայր	2040 հա	1250 հա	779 հա
Խոշոր եղջերավոր	5238	800	688
• որից կովեր	3164	480	298
Մանր եղջերավոր	2914	1200	895
Կոմբայն	4	1	1
Թրթուռավոր տրակտոր	5	2	2
Այլ տրակտոր	12	3	2
Բեռնատար	89	20	15

2. Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՞ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտե՞ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա:

Ռազմավարական ճյուղեր

⇒ Խոշոր եղջերավոր անասնապահություն

Խոշոր եղջերավոր անասնապահությունը այս համայնքներում բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է: Անասնապահության զարգացման համար համայնքներն ունեն նպաստավոր բնակլիմայական պայմաններ և բավարար քանակությամբ ռեսուրսներ:

⇒ Դաշտավարություն

Դաշտավարությունը ավանդաբար զարգացած է եղել այս համայնքներում: Թեև ունեն բավական քանակությամբ հողային ռեսուրսներ, այնուամենայնիվ, դաշտավարության ծավալները վերջին տարիներին կրճատվել են:

⇒ Զբոսաշրջություն

Համայնքների հարևանությամբ գտնվող Սևանա լճի ափամերձ հատվածում զարգանում են զբոսաշրջությունն ու հանգստյան գոտիները: Այս հատվածում զբոսաշրջությանը նպաստում է նաև տարածքի՝ հանրապետական նշանակության ճանապարհների խաչմերուկում լինելը և հնավայրերի առկայությունը:

3. Համայնքների մրցակցային առավելությունները

3.1 Մրցակցային առավելություններ, որոնք ընդհանուր են երեք համայնքների համար

- Մեծաքանակ արոտավայրերի առկայություն (Լճաշեն – 2040 հա, Չկալովկա – 1250 հա, Նորաշեն – 779 հա),
- արոտավայրերում ու խոտհարքերում առկա են բազմազան և բարձր սննդարար հատկանիշներ ունեցող խոտաբույսեր, ինչի շնորհիվ խոտի կալորիականությունը 2-3 անգամ բարձր է հանրապետության միջին ցուցանիշից,
- մսի որակական բարձր հատկանիշներ, ինչի շնորհիվ միսը ամենապահանջվածն է Սևան քաղաքի մսավաճառների կողմից,
- ՄՅ մայրուղու հարևանություն և ՄՅ պահեստային ճանապարհի առկայություն (Լճաշենի միջով),
- Սևանա լճին հարևանություն,
- Հայաստան – Իրան երկաթգիծը անցնելու է համայնքների հարևանությամբ (աշխատանքները սկսված են),
- բազալտի և ավազի (խարամ) հանքեր,
- չիչխանի պաշար:
- ՀՀ կենտրոնական հատված (ՀՀ բոլոր մարզերից գտնվում են օպտիմալ հեռավորության վրա):

3.2 Մրցակցային յուրահատուկ առավելություններն առանձին համայնքների համար

Լճաշեն

- Հանրապետության նշանակության ճանապարհային խաչմերուկ,
- Արգիշտի I արձանագրություն,
- Աշոտ երկաթի կիսավեր վանք,
- կիկլոպյան ամրոց,
- դամբարանադաշտեր:

Նորաշեն

- Մեկ տնային տնտեսությանը բաժին է ընկնում 5 գլուխ խոշոր եղջերավոր անասուն (ինչը կրկնակի մեծ է այլ անասնապահական համայնքների ցուցանիշներից):

Չկալովկա

- Հանդիսանում է մարզի անասնապահական համայնքներին անասնակերի հիմնական մատակարարարներից մեկը:

4. Անասնապահության վերլուծություն

4.1 Ընդհանուր տվյալներ

Երեք համայնքներում էլ խոշոր եղջերավոր անասնապահությունը տնտեսության գերակա ճյուղ է: Բնակչության մեծ մասը ներգրավված է այս ոլորտում:

Ստորև՝ աղյուսակներ 4.1 և 4.2 –ում, ներկայացված է տնային տնտեսությունների ներգրավվածությունը անասնապահության մեջ՝ ըստ համայնքների, և բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազլխաքանակի:

Աղյուսակ 4.1 Տնտեսությունների ներգրավվածությունը անասնապահության մեջ՝ ըստ համայնքների

	SS –երի ներգրավվածությունը անասնապահության մեջ		
	Նորաշեն	Չկալովկա	Լճաշեն
Անասնապահություն ընդհանուր	99 %	80 %	70 %
Խոշոր եղջերավոր անասնապահություն	70 %	65 %	60 %

Աղյուսակ 4.2 Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազլխաքանակի

	Նորաշեն	Չկալովկա	Լճաշեն
40 -50 գլուխ	10	8	15
20 – 40 գլուխ	15	15	12
10 – 20 գլուխ	30	50	40
մինչև 10 գլուխ	50	35	600
	688/ 298 կով	800 / 480 կով	5238/ 3164 կով

Գերակշռում է «կովկասյան գորշ» տեսակը: Միջին կաթնատվությունը 1500 լիտր/տարի է¹, կովերը չեն լիակրթվում:

Հեռագնա արոտի օգտագործումը հիմնականում տարածված չէ, քանի որ առկա է ջրի և

Լիակրթում - տարեկան կտրվածքով ստացվող կաթի մաքսիմալ քանակը, որին հնարավոր է հասնել ճիշտ կերակրման և պահքի միջոցով:

¹ Այս տեսակի կովերի համար կաթնատվության ամենաբարձր ցուցանիշը մոտ է 3000 լիտր/տարի ցուցանիշին:

Էլեկտրաէներգիայի խնդիր: Մոտ 20 ֆերմեր օգտագործում է հեռագնա արոտ տանելու հնարավորությունը:

4.2. Շուկայի վերլուծություն

20 գլխից ավելի կով ունեցող ֆերմերները կաթի 90% -ը հանձնում են շրջիկ կաթ հավաքողներին՝ 120 -130 դրամով, իսկ մնացած 10 % -ից ստանում են պանիր, մածուն, յուղ՝ սեփական օգտագործման և մանրածախ վաճառքի համար, ինչը հիմնականում իրականացվում է ծանոթ – բարեկամների և հիմնական հաճախորդների միջոցով:

Կաթը հավաքում են «Շանթ», «Մարիաննա», «Աշտարակ Կաթ», «Հրազդանի պանրի գործարան», «Լճաշենի պանրի գործարան» -ի ներկայացուցիչները, ինչպես նաև 2-3 միջնորդ, որոնք աշխատում են կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող տարբեր կազմակերպությունների հետ:

Շուկայում կաթի գինը ամառվա սեզոնին 120 դրամ է, մնացած սեզոններին՝ 130 դրամ: Կարող է տարվա ընթացքում տատանվել 10 -20 դրամի միջակայքում: Ֆերմերները կաթի բարձր յուղայնության համար հիմնականում չեն վարձատրվում, ինչը բացատրվում է ընդունվող փոքր քանակությունների դեպքում յուղայնության որոշման բարդության առկայությամբ: Միայն մեծածախ վաճառքի դեպքում է, որ կաթնամթերք արտադրողները կաթի յուղայնության համար վճարում են լրացուցիչ գումար:

20 -ից քիչ կով ունեցող ֆերմերները հանձնում են կաթի 50 % -ը և մնացած 50% -ից արտադրում կաթնամթերք՝ սեփական կարիքների համար և բարեկամներին վաճառելու նպատակով:

Վաճառքի նպատակով հիմնականում արտադրվում է պանիր: Տնային պայմաններում պանրի արտադրությունը գնալով նվազում է, քանի որ տեղական շուկայում այն վաճառվում է 1100 դրամով (1 կգ պանիր արտադրելու համար անհրաժեշտ է 8.3 լ կաթ, որը կարելի է հանձնել և ստանալ ամռանը 970 դրամ և 1080 դրամ՝ մնացած ամիսներին):

Լճաշենում գործում է կաթնամթերքի արտադրամաս, որը 120 – 130 դրամ է վճարում մեկ լիտր կաթի համար:


Մսի վաճառքն իրականացվում է Սևան քաղաքի մսավաճառների միջոցով, ովքեր համայնքներից գնում են միսը: Երինջի և հորթի միսը վաճառվում է 2000 դրամով, մնացածը՝ միջինը 1500 դրամով:

Ընդհանուր առմամբ երեք համայնքներում արտադրվում է տարեկան 6 000 տոննա կաթ.

- որից 4 500 տոննա կաթը հանձնվում է,
- 800 տոննա կաթից ստացվում է 90 տոննա պանիր, որը հիմնականում օգտագործվում է տնային տնտեսությունների ներքին պահանջարկի բավարարման համար,
- 700 տոննայից արտադրվում է 28 տոննա յուղ, որն օգտագործվում է սեփական կարիքների բավարարման համար, նաև վաճառվում է 2500 դրամով:



4.3. Խոշոր եղջերավոր անասնապահության արժեզրթայի սխեմատիկ պատկեր



4.4. Մատակարարների հետ հարաբերություններ

Այս հարաբերություններում հիմնական որոշումներ կայացնողները ֆերմերներն են: Մատակարարումը մոնոպոլացված չէ, ինչը թույլ է տալիս ֆերմերներին ընտրել հնարավոր լավագույն տարբերակը: Միևնույն ժամանակ՝ հաճախ մատակարարվող ծառայությունները և ապրանքները բավարար որակ չեն ունենում:

Անասնաբուժական ծառայություններ

Համայնքներում հասանելի են անասնաբուժական ծառայությունները: Բոլոր երեք համայնքները ունեն անասնաբույժներ:

Անասնաբույժները պետական պատվերի շրջանակներում մատուցում են վակցինացման ծառայություններ:

Արհեստական սերմնավորման ծառայություններ չեն մատուցվում: Ֆերմերների մոտ առկա է անտեղյակություն և վստահության պակաս արհեստական սերմնավորման հարցում: Կան անհատ ֆերմերներ, ովքեր օգտվում են մարզկենտրոնում հասանելի (Գավառ քաղաք) արհեստական սերմնավորման ծառայություններից, ինչը հեռավորության պատճառով առաջացնում է որոշակի բարդություններ:

Ֆերմերների մի մասը արհեստական սերմնավորման հետ է կապում կաթնատվության աճի միակ հնարավորությունը:

Արհեստական սերմնավորման ծառայություններից մասսայական չօգտվելը բացատրվում է նաև բարձր գնով (5000 - 15 000 դրամ), բեղմնավորման սեզոնին նախիրի մեջ ցուլի առկայությամբ (միևնույն ժամանակ առկա են նաև դեպքեր, որ նախիրի մեջ ցուլի բացակայությունը խնդիր է առաջացնում - Լճաշեն համայնք) և արհեստական սերմնավորողի հեռու գտնվելով:

Թույլ է պատվաստանյութի որակը, հաճախ հիվանդությունը չի կանխարգելվում պատվաստումից հետո:

Խտացված կերերի վաճառք

Խտացված կերերը գնում են Սևան քաղաքի շուկայից: Հիմնականում հասանելի է երեք տեսակի կեր՝

- Թեփ – 150 -170 դրամ,
- Գարի – 150 դրամ,
- Համակցված կեր – 250 դրամ:

Չկալովկա գյուղն ունի հացահատիկի աղաց, որի սարքավորումները բարելավման կարիք ունեն: Լճաշենում կա երկու աղաց: Նորաշենից և Չկալովկայից հացահատիկը բերում են այստեղ՝ աղալու:

Մեփական վարելահողերում բավարար քանակությամբ հացահատիկ չցանելու հիմքում գյուղտեխնիկայի պակասությունն է և մաշված լինելը:

Սարքավորումներ

Ֆերմերները ավտոմատացնում են կթի գործընթացը: Սարքավորումները հիմնականում գնում են Երևանյան շուկայից:

Մարդկային ռեսուրսներ

Քիչ թվով նախրապաններ և հովիվներ կան: Մեկ կովի համար նախրապանին ամսական վճարում են՝

- Լճաշենում 3000 դրամ,
- Չկալովկայում 1300 դրամ,
- Նորաշենում 2000 դրամ:

Կթվորներ գտնելն ավելի հեշտ է: Մեկ կովի համար կթվորին ամսական վճարվում են 3000 դրամ:

Անասնակերի հավաքում

Ֆերմաներին անհրաժեշտ անասնախոտը ֆերմերների հիմնական մասը հավաքում է սեփական միջոցներով (ֆերմերների 80%-ը ունեն սեփական տեխնիկաներ՝ խոտհնձիչներ, բեռնատարներ և այլն): Խոտհարքերը բավարարում են անասնախոտի ներքին պահանջարկը: Կան մեխանիզատորներ, ովքեր հավաքում են խոտը և վաճառում համայնքներից դուրս:

Հանդամիջյան ճանապարհները պարբերական բարեկարգման կարիք ունեն, ինչն էական ազդեցություն ունի հավաքվող խոտի քանակի վրա: Կա փորձ սեփական ջանքերով ճանապարհի բարեկարգման: Երեք գյուղում էլ առկա է մինչև 10 կմ հանդամիջյան ճանապարհի բարեկարգման անհրաժեշտություն:

Հավաքված խոտի ինքնարժեքը կախված է հավաքման գործընթացում սեփականատիրոջ ունեցած տեխնիկայից և ներգրավվածությունից:


Մեխանիզատորը, ով վճարում է մենակ հակավորման համար, իսկ մնացած աշխատանքները իրականացնում է ինքնուրույն՝ սեփական տեխնիկայով, մեկ հակի (20 կգ) համար ծախսում է 250 դրամ:

Աշխատանքների ամբողջական պատվիրման դեպքում մեկ հակը կարող է արժենալ մինչև 900 դրամ: Շուկայում մեկ հակը վաճառվում է 1000 դրամով:

Գործը սեզոնային է և կախված է անասնախոտի քանակից: Բարձր բերքատվության տարիներին (2013թ.) խոտը հիմնականում դժվար է վաճառվում:

4.6. Անասնապահության ոլորտում ծախսային հաշվարկ (10 կով)²:

Ստորև ներկայացված է 10 կովի հաշվով մեկ տարվա ընթացքում կատարվող ծախսերը և հիմնական գործընթացը: Գործընթացը սկսել ենք հաշվարկել մայիս ամսվանից:



Տարվա ընթացքում կովերը կթվում են մոտ 9 ամիս: Մեկ ամսվա կիթի վճարը 3000 դրամ է:

$9 \text{ ամիս} \times 3000 \text{ դրամ} \times 10 \text{ կով} = 270\ 000 \text{ դրամ:}$

Ընդամենը ծախս - 1 140 000 դրամ

² 10 կովը մինիմալ գլխաքանակն է, որից հետո միայն տնտեսությունը սեփական եկամուտներով կարող է ընդլայնվել՝ միաժամանակ բավարարելով ընտանիքի նվազագույն ծախսերը:

Եկամուտ

8 հորթ x 60 000 դրամ = 480 000 դրամ

կաթի վաճառք - 1500 լ x 10 կով x 120 դրամ = 1 800 000 դրամ

Ընդամենը եկամուտ - 2 280 000 դրամ

Շահույթ – 1 140 000 դրամ:

Տեղական թիմը անասնապահության ոլորտը վերլուծելիս



5. Ոչխարաբուծություն

Համայնքներում համեմատաբար զարգացած է նաև ոչխարաբուծությունը:

Աղյուսակ 5.1. Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազխաքանակի

	Նորաշեն	Չկալովկա	Լճաշեն
50 - 70 գլուխ	3	5	10
20 – 50 գլուխ	10	20	15
մինչև 20	30	50	50

Ոչխարները հիմնականում չեն կթվում, ինչը պայմանավորված է կիթի բարդությամբ: Վաճառում են գառներ՝ 35 000 – 40 000 դրամով:

Չկալովկա համայնքում առկա է մեկ հովիվ, մնացած համայնքներում հիմնականում ոչխարներին արածեցնում են հերթափոխով: Մեկ ոչխարի արածեցման ամսական վճարը 600 դրամ է կազմում:

Արտադրվում է փոքր քանակությամբ ոչխարի պանիր, ինչը վաճառվում է հիմնական հաճախորդներին:

Լճաշենում գործում է բրդի մթերման կետ/ արտադրամաս, որը բուրդ է ընդունում 300 դրամով (Այս տարի բուրդ չի մթերվել՝ բրդյա թելերի վաճառքի հետ կապված բարդությունների պատճառով):

Ստորև ներկայացված է 100 գլուխ ոչխար ունեցող ֆերմայի համար ծախսերի և եկամուտի հաշվարկը:

	Մեփական արտադրություն	Գնում շուկայից
	300 կգ x 100 ոչխար = 30 տ (1500 հակ)	
Անասնախոտ	1500 հակ x 600 դրամ = 900 000 դրամ	1500 հակ x 1000 դրամ = 1 500 000 դրամ
	1 տոննա	
հացահատիկ	1000 x 90 դրամ = 90 000 դրամ	1000 կգ x 120 դրամ = 120 000 դրամ
	500 կգ	
կարտոֆիլ	500 կգ x 30 դրամ = 15000 դրամ	500 կգ x 40 դրամ = 20 000 դրամ
հովիվ	1000 դրամ Լճաշենում, Չկալովկայում և Նորաշենում 500 – 600 դրամ	
	1000 դրամ x 7 ամիս x 100 գլուխ = 700 000 դրամ	
այլ	100 000 դրամ	
Ընդամենը ծախս	1 805 000 դրամ	2 440 000 դրամ
Եկամուտ (100 գառ/ոչխար x 40 000 դրամ)	= 4 000 000 դրամ	
Շահույթ	2 195 000 դրամ	1 560 000 դրամ

6. Անասնապահության արդյունավետության բարձրացման հնարավորություններ

6.1 Լիակթում

Կովկասյան գորշ տեսակի լիակթման ցուցանիշը 3000 լիտր/տարի է: Լիակթման վրա ազդող հիմնական գործոնը կերակրումն է. կերամիավորի նորման օրական կազմում է 9-10 կերամիավոր: Ձմեռվա ամիսներին կովին տրվող կերը մոտ 5 կերամիավոր է պարունակում (էրկու անգամ պակաս նորմայից), ինչը և բերում է կաթնատվության անկմանը: Ստորև ներկայացված է կերամիավորների պարունակությունը՝ ըստ հաճախ օգտագործվող կերատեսակների.

Տեսակ	1 կգ-ի հաշվարկով կերամիավորը
Խոտ առվույտի	0,52
Ծղոտ գարու	0,36
Քուսպ արևածաղկի	1,1
Եզիպտացորեն	1,1
Թեփ ցորենի	0,7
Թեփ գարու	0,7
Կարտոֆիլ	0,3

Մեկ կովի հաշվով 10 կերամիավորը ապահովելու համար ֆերմերը պետք է կատարի օրական 450 դրամի ծախս (եթե ֆերմերն ինքն է զբաղվում հողագործությամբ) կամ 850 դրամի ծախս, եթե ձեռք է բերում շուկայից:

Ստորև ներկայացված է լիակթման դեպքում եկամտի և ծախսերի փոփոխությունը:

	Ֆերմերը գնում է լրացուցիչ կեր	Ֆերմերն արտադրում է լրացուցիչ կեր
Ծախս	850 դրամ x 180 օր = 153 000 դրամ	450 դրամ x 180 օր = 81 000 դրամ
Կաթնատվության բարձրացում	1400 լ	1400 լ
Եկամուտ	1400լ x 120 դրամ = 168 000 դրամ	1400լ x 120 դրամ = 168 000 դրամ
Լրացուցիչ շահույթ	15 000 դրամ	85 000 դրամ
10 կովի համար	150 000 դրամ	850 000 դրամ

Վերը նշված աղյուսակից ակնհայտ է, որ լրացուցիչ կերի գնման դեպքում մեկ կովից տարեկան հնարավոր է ստանալ 15 000 դրամ լրացուցիչ շահույթ, ինչը բավականին փոքր գումար է և անհրաժեշտ է լրացուցիչ կերերի տեղական արտադրության խթանում:

**Նախաձեռնություն –
անասնակերի
տեղական
արտադրության
խթանում**

6.2. Հեռագնա արոտների և արոտավայրերի արդյունավետ օգտագործում

Իհարկե, բավարար լրացուցիչ քանակությամբ կերակրումը դեռևս բավարար չէ լիակթան համար : Անհրաժեշտ է նաև ճիշտ պահք, որի մեջ մեծ կարևորություն ունի հեռագնա արոտների և արոտավայրերի արդյունավետ օգտագործումը:

Նորաշեն և Լճաշեն համայնքներում առկա է արոտավայրերի ջրարբիացման անհրաժեշտություն: Ջրի պաշարին հասնելու համար նախիրը անցնում է օրական 15- 20 կմ ճանապարհ, ինչը բացասական է ազդում կաթնատվության վրա: Արոտավայրերում ջրի առկայությունը թույլ կտա 25 – 30%-ով բարձրացնելու կաթնատվության ցուցանիշը համայնքներում:

**Նախաձեռնություն.
Լճաշեն և Նորաշեն
համայնքներում
արոտների
ջրարբիացման
օժանդակություն:**

Համայնքներում շատ քիչ թվով ֆերմերներ են հեռագնա արոտներից օգտվում, ինչը պայմանավորված է ջրի և էլեկտրաէներգիայի բացակայությամբ: Ֆերմերներին կթի սարքավորումների և փոքր ագրեգատների ձեռքբերման հնարավորությունը թույլ կտա հեռագնա արոտներում ունենալ էլեկտրաէներգիա, հետևաբար՝ ապրելու համար առավել բարեկեցիկ պայմաններ, ջրի տաքացման և ավտոմատ կիթի հնարավորություն:

6.3 Կաթնատու տոհմային անասունների բուծում

Անասնապահության արդյունավետության բարձրացման եղանակներից է նաև արհեստական սերմնավորմամբ կաթնատու տոհմային սորտերի ստացումը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի տեսակները հնարավոր է ստանալ արհեստական սերմնավորման եղանակով՝ առանց ծնելիության հետ կապված խնդիրների:

Այս երեք տեսակների կաթնատվությունը հետևյալն է՝

- Շվից, Հոլշտեյն - 6000 - 8000 լիտր (յուղի պարունակությունը 3.5)
- Ջերսի – 4 000 լիտր (յուղի պարունակությունը 6.0)

Ֆերմերների մոտ տարածված է այն կարծիքը, որ արհեստական սերմնավորման դեպքում կովկասյան գորշ տեսակը չի կարող ծնել հորթը:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի ցեղատեսակները բավարարում են **ծնելիության դյուրինության գործակցին**, ինչը ենթադրում է սորտափոխության ընթացքում ծնելիության հետ կապված խնդիրների բացակայություն:

4 սերնդափոխություն է անհրաժեշտ հիմնական տոհմին շատ մոտ տեսակ ստանալու համար, որոնց կաթնատվության աճը ներկայացված է ստորև:

**Նախաձեռնություն .
անասնաբուժական,
արհեստական
սերմնավորման և
սարքավորումների
մատակարարման
որակյալ մասնավոր
կենտրոնի հիմնում:**

Մերունդ	Անվանում	Մակսիմալ կաթնատվություն	Թույլատրվում է հեռագնա արտատվայր տանել
Առաջին	F1	3000	Այո
Երկրորդ	F2	4000	Այո
Երրորդ	F3	5000	Ոչ
Չորրորդ	F4	60000 - 8000	Ոչ

6.4 Կաթի մթերում և կաթնամթերքի արտադրություն

Կաթի մթերումը կատարվում է համայնքներից դուրս տեղակայված կաթնամթերքի խոշոր արտադրողների ներկայացուցիչների և միջնորդ վերավաճառողների միջոցով: Մթերողներից ոչ բոլորն են տեխնիկապես զինված և չեն բավարարում կաթի մթերման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններին:

**Նախաձեռնություն.
տեղական շարժական
հավաքման կետի
հիմնման
աջակցություն:**

Արտադրված կաթի գրեթե 80%-ը մթերվում և դուրս է գալիս համայնքից:

Անասնապահության հետագա զարգացումը սերտորեն կապված է տեղական կաթնամթերքի արտադրության փոքր արտադրամասերի գործարկման հետ, ինչը համայնքի ներսում կստեղծի լրացուցիչ եկամուտ, կնվազեցնի կախումը արտաքին մթերողներից, ինչպես նաև միջնորդ վերավաճառող օղակի մոնոպոլ դիրքի վերացումը կրեթի մթերվող գնի բարձրացմանը (կաթնամթերք արտադրող ձեռնարկություններին կաթը հանձնվում է միջինը 170 դրամով և լրացուցիչ վճարվում է յուղայնության համար: Կաթը գյուղացիներից հավաքվում է 120 – 130 դրամով և յուղայնության համար լրացուցիչ գումար չի վճարվում):

**Նախաձեռնություն.
տեղական կաթնամթերքի
արտադրության փոքր
արտադրամասերի հիմնման
աջակցություն,
ուսուցողական կենտրոնի
հիմնում, որակի
միասնական
ստանդարտների մշակում:**

7. Նախաձեռնություններ անասնապահության արժեզրթայում

- Անասնակերի տեղական արտադրության խթանում:
- Լճաշեն և Նորաշեն համայնքներում արոտների ջրարբիացման օժանդակություն:
- Անասնաբուժական, արհեստական սերմնավորման և սարքավորումների մատակարարման որակյալ մասնավոր կենտրոնի հիմնում:
- Տեղական շարժական կաթի հավաքման կետի հիմնման աջակցություն:
- Տեղական կաթնամթերքի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն, որակի միասնական ստանդարտների մշակում:
- Տեխնիկական օժանդակություն, ապրանքի առաջ մղում շուկաներում:

8. Հողագործության վերլուծություն

Հողագործությունը ևս տարածված է համայնքներում: Ցանվում է հիմնականում կարտոֆիլ և հացահատիկ:

	SS –երի ներգրավվածությունը հողագործության մեջ		
Տնտեսության հիմնական բրոններ	Նորաշեն	Չկալովկա	Լճաշեն
Հողագործություն	20 %, որից կարտոֆիլ՝ 15 %, հացահատիկ՝ 5 %	10 %, որից կարտոֆիլ՝ 8 %, հացահատիկ՝ 2 %	30 %, որից կարտոֆիլ՝ 5 %, հացահատիկ՝ 25 %

Հողը կոռոզիայի է ենթարկված, հիմնականում պարարտացվում է ազոտական պարարտանյութով: Ռոտոզովի վարելահողեր համայնքներում չկան:

Հնում օգտագործել են կարբամիտ տեսակի պարարտանյութ, որը բավականին օգտակար է եղել ստացվող բերքի քանակի և որակի համար: Ներկայումս տվյալ պարարտանյութից Հայաստանի Հանրապետություն չեն ներմուծում և ձեռքբերումը գրեթե անհնար է:

Ստորև հաշվարկված են, ըստ հերթականության, ցորենի և կարտոֆիլի համար 1հա –ում կատարվող ծախսերը.

Ցորեն

- ✚ Սերմացու – 400կգ x 250 դրամ,
- ✚ Վար – 40 000 դրամ,
- ✚ Ցանք – 20 000 դրամ,
- ✚ Քաղ – 40 000 դրամ,
- ✚ Այլ ծախսեր – 10 000 դրամ,
- ✚ Բերքատվությունը՝ 2տ.:

Կարտոֆիլ


- ✚ Սերմացու - 4տ x 150 դրամ,
- ✚ Վար - 40 000 դրամ,
- ✚ Ցանք – 30 000 դրամ,
- ✚ 2 x ընթացիկ փխրեցում - 60 000 դրամ,
- ✚ Դեղամիջոցներ - 50 000 դրամ,
- ✚ Պարարտանյութ – 40 000 դրամ,
- ✚ Քանդել – 40 000 դրամ,
- ✚ Բերքատվությունը 15 տ է, որից ստացվում է.
 - ✚ Խոշոր՝ 10տ,
 - ✚ Սերմացու՝ մոտ 3տ – 4տ,
 - ✚ Մանր՝ մոտ 1տ – 2տ:

Թե՛ ցորենի, թե՛ կարտոֆիլի բերքատվությունը բավականին ցածր է համայնքներում: Վաճառքի գները խիստ փոփոխական են, ինչը բացասական է ազդում հողագործության զարգացման վրա:

Չմշակվող հողերում բնակիչները ցանկանում են ցանել բազմամյա խոտաբույսեր, անասնակեր, սակայն երկար տարիների ընթացքում չմշակված հողերը բավականին բարդ է մշակել, ինչը և բնակիչները չեն ցանկանում անել:

Այդ հողերի մշակման համար անհրաժեշտ է թրթուրավոր գյուղտեխնիկա: Համայնքում առկա են այսպիսի գյուղտեխնիկաներ, սակայն ամխիթար վիճակում են:

Ստորև սխեմատիկ ներկայացված են հողագործության ծավալի կրճատման հիմանախդիրները:



9. Նախաձեռնություններ հողագործության ոլորտում.

- Կրծողների դեմ միասնական պայքարի իրականացում:
- Հողերի լաբորատոր ստուգում:
- Գյուղտեխնիկայի թարմացման աջակցություն:
- Անջրդի հողերում բարձր բերքատվություն ունեցող մշակաբույսերի սերմերի ներկրման աջակցություն:

10. Զբոսաշրջության վերլուծություն

Սևանա լճի հարևանությունը իր դրական ազդեցությունն է թողել ծովափնյա զբոսաշրջության զարգացման վրա:

Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքերի հարևանությամբ գործում է 11 հանգստի գոտի, որոնք առաջարկում են տաղավարներ և գիշերակաց, ինչպես նաև հասարակական սննդի ծառայություններ:

Ի համեմատություն Սևանի հանդիպակած ափամերձ գոտու և թերակղզու՝ այս ափամերձ տարածքները համեմատաբար քիչ են գովազդված և հայտնի:

Այս հատվածի հիմնական հաճախորդները Գեղարքունիքի մարզի բնակիչներն են: Կան եզակի հանգստի գոտիներ, որոնք աշխատում են ամբողջ տարին և ունեն հաճախորդներ նաև այլ մարզերից, ինչպես նաև արտասահմանից՝ համագործակցելով տուր օպերատորների և գիդերի հետ:


Հիմնականում բավականին թույլ են գիշերակացի պայմանները: Մեկ գիշերվա համար սենյակը արժե 5000 – 30 000 դրամ՝ կախված սեզոնից և եղանակային պայմաններից:

Հանգստի գոտիների մեծ մասը աշխատում է միայն հուլիս – օգոստոս ամիսներին: Աշխատանքի կարճ ժամկետը իր հերթին բարձրացնում է մատուցվող ծառայությունների գները և դարձնում հանգստի գոտիները գնային առումով ոչ մրցունակ ինչպես հայաստանյան այլ հանգստավայրերի, այնպես էլ արտասահմանյան հանգստավայրերի համեմատությամբ:

12 սննդի օբյեկտներից երկուսում միայն հնարավոր է գտնել հայկական ավանդական ուտեստ՝ հարիսա, դափամա և այլն: Օբյեկտներից մեկն ունի երկլեզու մենյու:

Լրացուցիչ ժամանցի հնարավորություններ չկան: Հասանելի են միայն սկուտերներ և ջրային հեծանիվներ:

11. Զբոսաշրջիկության արժեզրայի գնահատում



Շնորհակալություն ենք հայտնում ԼՃաշեն, Չկալովկա և Նորաշեն համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանը աջակցման համար:



Փորձագիտական խումբ՝

Արսյոմ Գրիգորյան

Սևակ Դադոյան